Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-841-11.03.2010-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 68-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«*ՀՈԴՎԱԾ 68. ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ*

1. Գործն ըստ էության լուծող դատական ակտերը պարտադիր հրապարակվում են Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2. Վճռաբեկ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը ենթակա են պարտադիր հրապարակման նաեւ «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում»:

3. Դատական ակտերի՝ Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակման կարգը սահմանում է դատարանների նախագահների խորհուրդը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 104-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի 1-ին կետը «նրա» բառից հետո, իսկ 2-րդ մասի 3-րդ կետը՝ «իր» բառից հետո լրացնել «կամ նրա մերձավոր ազգականի» բառերով.

2. 2-րդ մասի 1-ի և 2-րդ կետերը «նրան» բառերից հետո լրացնել «կամ նրա մերձավոր ազգական հանդիսացող դատավորին» բառերով.

3. 4-րդ մասում՝

1) «իրեն» բառից հետո լրացնել «կամ իր մերձավոր ազգականին» բառերով.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Արդարադատության խորհրդի իրավաբան գիտնական անդամը չի մասնակցում նաեւ իր մերձավոր ազգական հանդիսացող դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացմանը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 107-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4.1 մասով.

«4.1. Արդարադատության խորհրդի նիստերի ժամանակ նիստը վարողը իրավունք չունի կարգապահական վարույթին ըստ էության վերաբերող հարցեր տալ զեկուցողներին:»:

Հոդված 4. Օրենսգրքի 161-րդ հոդվածի 3-րդ մասը «ավարտվելուց հետո» բառերից հետո լրացնել «, բացառությամբ խորհրդի անդամի կողմից արտահայտած դիրքորոշման շրջանակներում սույն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2.1-րդ մասին համապատասխան խորհրդի անդամի կողմից ներկայացված հատուկ կարծիքի դեպքի»:

Հոդված 5. Օրենսգրքի 163-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Գործի քննությունը ավարտված հայտարարելուց հետո Արդարադատության խորհուրդը անցնում է խորհրդակցական սենյակ որոշում կայացնելու համար: Սույն օրենսգրքի 161-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվում է գործի քննության ավարտման օրը: Սույն օրենսգրքի 161-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված որոշման հրապարակման հետ մեկտեղ Արդարադատության խորհուրդը հայտարարում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին սույն օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որոշման հրապարակման վայրը եւ ժամանակը: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը հրապարակվում է սույն օրենսգրքի 161-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված որոշման հրապարակման օրվանից 15 օրվա ընթացքում:»

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 2.1 մասով.

«2.1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում կայացնելիս Արդարադատության խորհրդի անդամը կարող է ներկայացնել հատուկ կարծիք, որը Արդարադատության խորհրդի որոշման հետ հրապարակվում է Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում եւ «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ Ի Կ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
1. ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Կ. Նահապետյան	1. Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող լրացումների համաձայն՝ արդարադատության խորհրդի անդամը չի մասնակցում իր մերձավոր ազգական հանդիսացող դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումների կայացմանը: Հարկ է նշել սակայն, որ արդարադատության խորհրդի անդամը, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումների կայացմանը մասնակցելուց բացի, մասնակցում է նաև այլ որոշումների կայացմանը, որոնք ևս կարող են առնչվել իր մերձավոր ազգականներին: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ արդարադատության խորհրդի անդամների մոտ շահերի հնարավոր բախումը կանխելու, ինչպես նաև նրանց կողմից անաչառ որոշումների կայացումն ապահովելու նպատակով ւսռաջարկում եմ՝ ա) ՀՀ դատական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը «նրա»	1.Ընդունվել է ամբողջությամբ	1.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	բառից հետո լրացնել «կամ իր մերձավոր ազգականի» բառերով, «նրան» բառից հետո «կամ իր մերձավոր ազգական հանդիսացող դատավորին» բառերով. բ) ՀՀ դատական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը «իր» բառից հետո լրացնել «կամ իր մերձավոր ազգականի» բառերով. գ) ՀՀ դատական օրենսգրքի 104-րդ հոդվածի 4-րդ մասը «իրեն» բառից հետո լրացնել «կամ իր մերձավոր ազգականին» բառերով. դ) ՀՀ դատական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «նրա» և «նրան» բառերը փոխարինել «իր» և «իրեն» բառերով՝ նույն փոփոխությունը կատարելով նաև 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում և դրանում նախագծով նախատեսվող լրացման մեջ:		
	2. Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող լրացման համաձայն՝ նախատեսվում է ՀՀ դատական օրենսգրքում դրույթ ամրագրել, որով կբացառվի վճռաբեկ դատարանի նախագահի կողմից արդարադատության խորհրդի նիստերի ժուսմանակ զեկուցողներին կարգապահական վարույթին ըստ էության վերաբերող հարցեր տալը: Անհրաժեշտ է նշել սակայն, որ ՀՀ	2. Չի ընդունվել	2. Նախագծով կատարվող փոփոխությունը պայմանավորված է գործնականում ձևավորված պրակտիկայով և օրենքի հիշյալ նորմի հստակեցման անհրաժեշտությամբ: Քանի որ խոսքը զուտ արդարադատության խորհրդի նիստերի ժամանակ վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունների մասին է, ապա անհրաժեշտ է, որ հստակորեն բացառվի նշված լիազորության իրականացումը, հակառակ դեպքում

	Սահմանադրության 5-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանդրությամբ կամ օրենքներով: Միևնույն ժամանակ ըստ ՀՀ դաւոական օրենսգրքի 109-րդ հոդվածի առաջիս մասի՝ նիստը վառողը բացում է արդարադատության խորհրդի նիստը՝ հայտարարելով, թե ինչ հարց է ենթակա քննության, ինչպես նաև խորհրդի անդամների համաձայնությամբ սահմանում է նիստի օրակարգում ընդգրկված հարցերի քննության կարգը, ղեկավարում է նիստի ընթացքը: Հիշյալ դրույթների համաձայն՝ վճռաբեկ դատարանի նախագահը՝ որպես արդուսրադատության խորհրդի նիստը վարող պաշտոնատար անձ, Սահմանադրությամբ և ՀՀ դատական օրենսգրքով նախատեսված լիազորություններից բացի, որևէ այլ լիազորություն չունի: Հիմք ընդունելով վերոնշյալ նկատառումները՝ առաջարկում եմ նախագծից հանել ՀՀ դատական օրենսգրքի 107-րդ հոդվածում նախատեսված լրացումը:		նիստը վարողի կարգավիճակից կարող է բխել արդարադատության խորհրդի նիստերի ժամանակ զեկուցողներին անգամ կարգապահական վարույթին ըստ էության վերաբերող հարցեր տալու հնարավորության ընձեռումը:

	3. Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասով առաջարկվող լրացման համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում կայացնելիս արդարադատության խորհրդի անդամին տրվում է հատուկ կարծիք ներկայացնելու և այն վերջնական որոշման հետ հրապարակելու հնարավորություն: Հարկ է նշել սակայն, որ հատուկ կարծիքի ինստիտուտը խորհրդակցական սենյակի գաղտնիությունը դարձնում է խոցելի՝ միաժամանակ խաթարելով արդարադատության խորհրդի՝ որպես որոշում կայացնող մարմնի միասնությունը: Հատուկ կարծիքի հրապարակումը նվազեցնում է կայացված որոշման ճշմարտացիությունը, քանի որ ընդունված որոշումն ընկալվում է ոչ թե որպես միակ ճիշտ տարբերակ, այլ որպես մեծամասնության կարծիք: Վերոնշյալից բացի՝ հատուկ կարծիք ներկայացնելու հնարավորությունը կարող է չարաշահումների տեղիք տալ և օգտագործվել որոշակի հանրության ուշադրությունը գրավելու և լայն ճանաչում ձեռք բերելու նպատակով:	3. Ընդունվել է մասնակիորեն	3. Նախագծում հստակեցվել է 161-րդ հոդվածի 3-րդ մասում կատարվող փոփոխությունը և սահմանվել է, որ հատուկ կարծիքի մեջ հրապարակման ենթակա է միայն խորհրդի անդամի կողմից արտահայտված դիրքորոշումը: Իսկ ընդհանուր առմամբ հատուկ կարծիքի ինստիտուտը ապահովում է արդարադատության խորհրդի նկատմամբ հանրային հսկողությունը՝ ամենևին առանց խաթարելու նրա անկախությունը: Բացի այդ, քանի որ խոսքը կոլեգիալ կազմով գործող ad hoc դատարանի մասին է, ապա համակարգային առումով հատուկ կարծիքի՝ վաղուց ի վեր արմատավորված ինստիտուտը լիովին տեղավորվում է նման մարմինների գործունեության ընդհանուր տրամաբանության շրջանակներում:

	Առավել մտահոգիչ է այն, որ հատուկ կարծիքի հրապարակումը կարող է արդարադատության խորհրդի անդամի նկատմամբ տարաբնույթ ճնշումներ գործադրելու առիթ հանդիսանալ՝ ազդելով վերջինիս անկախության, ինչպես նաև ծառայողական առաջխաղացման (կարիերայի) վրա: Ի վերջո, անհրաժեշտ է մշել, որ հատուկ կարծիքի ինստիտուտը չունի ռեալ և զգալի կիրառություն, քանի որ հատուկ կարծիքի ներկայացումը և հրապարակումն ըստ էության իրավական հետևանքներ չեն առաջացնում: Հաշվի առնելով վերոնշյալ փաստարկները՝ առաջարկում եմ նախագծից հանել հատուկ կարծիքի ինստիտուտին վերաբերող դրույթները:		